Նրանց օրհնված և երջանիկ վիճակը, ովքեր պահում են Աստծո պատվիրանները

Վարժություն Ա. «Խորհեք նրանց օրհնված և երջանիկ վիճակի մասին, ովքեր պահում են Աստծո պատվիրանները. . . Նրանք օրհնված են բոլոր բաներում՝ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր»:

Վերանայեք դասի սկզբում ձեր կազմած օրհնությունների ցուցակը: Ավելացրեք լրացուցիչ օրհնություններ, որոնք կարող են մտքին գալ: Ընդգծեք այն օրհնությունները, որոնք ավելի աշխարհիկ են և շրջանի մեջ առեք այն օրհնությունները, որոնք ավելի հոգևոր են: Հնարավոր է նկատեք, որ մի քանիսը համապատասխանում են երկու անվանակարգերին:

- Ձեր կյանքում ի՞նչ ապացույց եք տեսնում, որ Մոսիա 2.41 հատվածի այս պնդումը ճշմարիտ է:
- Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 130.20–21 հատվածները: Ի՞նչ եք սովորում պատվիրանները պահելու և Աստծո օրհնություններն ստանալու միջև եղած կապի մասին: Ցանկության դեպքում կարող եք խաչաձև հղում կատարել Մոսիա 2.41 հատվածին կամ կապել այդ հատվածները:
- Ըստ ձեզ՝ Երկնային Հայրն ինչո՞ւ է օրհնում մեզ թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր օրհնություններով: Ի՞նչ է սա ուսուցանում Նրա մասին:

Այս նախադասությունը գրեք ձեր օրագրի որևէ դատարկ էջի կենտրոնում և շուրջը նշումներ կատարելու տեղ թողեք: Շրջանի մեջ վերցրեք նախադասության այն բառերը կամ արտահայտությունները, որոնք կարևոր են ձեզ համար: Շրջանի մեջ վերցրած յուրաքանչյուր բառի կամ արտահայտության համար նշումների ամպ նկարեք և գրեք մի սահմանում, դրա հետ կապված սուրբ գրության հատվածները կամ ձեր ունեցած ցանկացած այլ գաղափար:

Օրինակ՝ եթե շրջանի մեջ եք վերցրել «ընդունվում են երկնքում» արտահայտությունը, դրա հետ կապված նշումների ամպը կարող է այսպիսի մի միտք ներառել. «Լինել ընդունված նշանակում է, որ ինչ-որ մեկն այնտեղ սպասում է ինձ: Հիսուսն ուսուցանել է, որ պետք է տեղ պատրաստի մեզ համար երկնքում և հետո մեզ ընդունի այնտեղ (տես Հովհաննես 14.2–3): Իմ սիրելի երկնային ծնողները և Հիսուս Քրիստոսն այնտեղ են և կընդունեն ինձ, եթե հավատարիմ մնամ»:

Շրջանի մեջ վերցրած յուրաքանչյուր բառի կամ արտահայտության համար լրացրեք նշումների ամպը: Ուշադրություն դարձրեք ձեր մտքին եկող հարցերին կամ տպավորություններին:

- Այս վարժությունը կատարելիս ի՞նչ գաղափարներ ունեցաք:
- Այդ գաղափարներն ինչպե՞ս կարող են օգնել ձեզ ձեր կյանքում այս պահին:
- Որո՞նք են այն բաները, որ կարելի է հեշտությամբ հիշել: Որո՞նք են ավելի դժվար հիշվողները:

Հիշեք, թե ինչ սովորեցիք Աստծո մասին Մոսիա 2 գլուխն ուսումնասիրելիս: Կարդացեք Մոսիա 2.22 հատվածը՝ փնտրելով հավերժական ճշմարտություններ Աստծո մասին:

- Ի՞նչ գիտեք Աստծո մասին, որը կարող է օգնել ձեզ վստահել Նրա խոստումներին և պահել Նրա պատվիրանները:
- Ի՞նչ կարող եք անել՝ Նրա մասին սա հիշելու համար:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.